ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՆԱՎԹԱԴՈԼԱՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ՌՈՒԲԵՆ ԻՆՃԻԿՅԱՆ

Տնտեսական անկախության համար զարգացող երկրների մղած պայքարի վերջին երկու տասնամյակներում կարևոր նշանակություն ստացավ նավթադոլարների (նավթի վաճառքից ղոյացող դրամական միջոցների) օգտագործման պրոբլեմը։

Հանրահայտ է, որ «երրորդ աշխարհ»-ի երկրների զարգացման ընթացքի վրա մեծ ազդեցություն է ունեցել իմպերիալիստական պետությունների գաղութային քաղաքականությունը, մասնավորապես նրանց բնական հարստությունների ինտենսիվ շահագործումը։ Բանն այն է, որ չնայած գաղութային սիստեմի փլուզմանը, անտեսական կախումը դեռևս մնում է. փոխվում են միայն շահագործման ձևերը։ Ստեղծվում են կապիտալիստական զարգացած և նոր ազատագրված երկրների անիրավահավասար փոխհարաբերությունների նոր, դանդաղ «դաշնակցային» կամ «իրավահավասար» փաստաթղթերով սրոգված ձևեր։ Դրանք տնտեսական կյանքի բնագավառում քիչ են փոխում զարգացող գոյատևող պատկերը, այսինքն՝ շարունակվում է զարգացած կապիտալիստական երկրների կողմից զարգացող երկրների բնական ռեսուրսների շահագործումն ու անհավասար առևտուրը։ Մինչև 1960 թ. նման փոխհարաբերությունների դասական օրինակ էին նավթարդյունաբերող երկրների և նավթային մոնոպոլիաների միջև տիրող հարաբերությունները։

Նավթային մոնոպոլիաներն ուղղահայաց կերպով միացված (ինտեգրացված) ընկերություններ են, որոնք իրենց ձեռքում են կենտրոնացրել բոլոր գործողությունները՝ նավթի արդյունահանումից մինչև նավթամթերքների իրացումը։ Բնականաբար, օգտագործելով բոլոր հնարավոր միջոցները, նրանք աշխատում են ստանալ հնարավորին չափ մեծ քանակությամբ էժան նավթ։ Այդ պայմաններում նավթարդյունաբերող երկրները տասնամյակներ շարունակ բավարարվում էին մոնոպոլիաների հսկայական եկամուտներից իրենց բաժին հասած փոքր մասով։

Ներքին և արտաքին բարենպաստ պայմանների, ինչպես նաև միասնության անհրաժեշտության գաղափարին հանգելու շնորհիվ 1960 թ. նավթ արտահանող 13 զարգացող երկրներ կարողացան միավորել իրենց ջանքերը և ստեղծել մի կազմակերպություն, որը հայտնի է ՕՊԵԿ (Organisation of Petroleum Exporting Countries) անունով։ Պաշտպանելով անդամ երկրների շահերը, այդ կազմակերպությունն արդեն 1960-ական թվականների վերջերին և 1970-ական թվականների սկզբներին կարողացավ իր անդամների կոլեկտիվ կամքը հակադրել նավթային մոնոպոլիաների և արևմտյան տերությունների

միասնական ուժին։ ՕՊԵԿ-ի երկրները կատարեցին առաջին ճիգերը՝ սահմանելու նավթի ավելի արդար գներ և ուժեղացնելու իրենց հսկողությունը բնական հարստությունների արդյունահանման վրա։ Իմպերիալիզմի թուլացման պայմաններում ՕՊԵԿ-ի գործունեության հետզհետե աշխուժացումը և վրա հասած էներգետիկ ճգնաժամը հանգեցրին ուժերի զգալի տեղաշարժերի։ Այս բոլորի, ինչպես նաև 1973 թ. արաբա-իսրայելական պատերազմի հետևանքով, դեպքերը ստացան ավելի արագ ընթացք։ Արդեն 1974 թ. նավթի գները բարձրացան ավելի քան 4 անգամ և մեկ բարել նավթի (7,3 բարելը= է 1 տ) արժեքը սահմանվեց 11,5 դոլար։ Այս փոփոխությունը մի քանի անգամ ավելացրեց ՕՊԵԿ-ի անդամների եկամուտը։ Եթե 1970 թ. նավթարդյունաբերող երկրների եկամուտը կազմեց ընդամենը 25 մլդ դոլար, ապա 1974 թ.՝ 100 մլդ դոլար[1]։ Դրա մեծ մասը ստացան Պարսից ծոցի երկրները և Լիբիան, որոնց կուտակումները կազմեցին ՕՊԵԿ-ի անդամների ոսկու և վալյուտայի ընդհանուր պաշարների մոտ 70%-ը։ Նավթի գները բարձրացվեցին նաև 1975 և 1977 թթ.։ Ստեղծված իրավիճակի յուրահատկությունն այն էր, որ ՕՊԵԿ-ի ամենահետամնաց և փոքրաքանակ բնակչություն ունեցող անդամներին ընկնում էր նավթային եկամուտների մեծ մասը։ Չկարողանալով երկրի ներսում իրացնել այդ հսկայական գումարները, վերջիններս դարձան կապիտալ արտահանող երկրներ, որ բոլորովին նոր երևույթ էր «երրորդ աշխարհ»-ում[2]։ Հետևանքը եղավ այն, որ Արևմուտքի պետությունները զգալիորեն ավելացրին իրենց ապրանքների արտահանումը դեպի նավթարդյունաբերող երկրներ, որպեսզի կարողանան հավասարակշռել ապրանքափոխանակությունը և վերջիններիս ներգրավել միջազգային տնտեսական կապերի մեջ, որտեղ ուժեղ է Արևմուտքը։ Մյուս կողմից, Արևմուտքի երկրները, օգտագործելով իրենց ֆինանսական սիստեմի առավելությունները և տիրապետող վիճակը, նավթադոլարների հիմնական մասը կարողացան ուղղել դեպի արևմտյան բանկերը կամ իրենց տնտեսական ոլորտը։ Այս պայմաններում նավթ ներմուծող զարգացող երկրների վիճակը վատացավ։ ՕՊԵԿ-ի օգնությունն այդ երկրներին ծածկում էր նավթի գների բարձրացման հետ կապված նրանց կորուստների միայն մի մասը։ Բացի այդ, արևմտյան բանկերում ՕՊԵԿ-ի անդամների ավանդների տոկոսները չկարողացան ապահովել նույնիսկ իրենց երկրների արագ ու հավասարակշռված տնտեսական զարգացումը։ Այդ երկրներում կային մշակված ծրագրեր, դրանց իրագործման ցանկություններ ու միջոցներ, սակայն չկային դեռևս ամրապնդված տնտեսության պետական սեկտոր, անհրաժեշտ ազգային կադրեր։ Վերոգրյալից բացի, նավթարդյունաբերող երկրներին բնորոշ էր սոցիալական խայտաբղետ շերտավորումը, բազմակացութաձև տնտեսությունը և շահագործող խավերի սոցիալական պարազիտիզմը։ Այս ամենին պետք է ավելացնել նաև աճի ինֆլյացիան, որը հիմնականում հետևանք է աճող կուտակումներն օգտագործելու նեղ հնարավորությունների, ինչպես նաև երկրի տնտեսական ու սոցիալական հետամնացության։ Ավելին, ընդլայնվող կապերի հետևանքով զարգացող երկրների, մասնավորապես ՕՊԵԿ-ի անդամների

---

[1] „International Financial Statistics", January, 1977.

[2] Տե՛ս «Народы Азии и Африки» *ամսագրի 1977 թ. № 3-ի 153—164 էջերում տվյալ հարցին նվիրված տեսական կոնֆերանսի նյութերը։*

վրա գնալով ավելի ու ավելի մեծ ազդեցություն է գործում միջազգային կյանքում արագորեն ծավալվող ինֆլյացիան։

Դրա հիմնական պատճառը արտաքին առևտուրն է։ Ներմուծվող ապրանքների գների մեջ արդեն արտահայտվում են ինչպես կապիտալիստական երկրներում տիրող ինֆլյացիան, այնպես էլ մոնոպոլիաների սպեկուլյատիվ հավելումները։ Եթե մոնոպոլիաների ներդրումները կատարվում են արդյունաբերության ընդարձակում, ապա գների աճը տեղի է ունենում շարունակ՝ դատվելիների նախնական արժեքի վերահաշվարկումների հետևանքով։ Այսպես, օրինակ, ճապոնական «Միցուբիսի» ընկերությունը Սաուդյան Արաբիայում կառուցվող էթիլենի գործարանի շինարարության արժեքի բազմաթիվ վերանայումների հետևանքով նախնական գումարը բարձրացրել է հինգ անգամ[3]։ Դիրաի սուլթանի կառավարության հետ 1973 թ. կնքած պայմանագրով անգլիական մի ընկերություն պարտավորվում էր կառուցել 9 մլն ֆունտ ստերլինգ արժողությամբ ցեմենտի գործարան։ Սակայն մեկ տարի անց շինարարության արժեքը հասավ 26 միլիոնի[4]։ Նման օրինակները բազմաթիվ են։ Իրանի շահի հայտարարության համաձայն, ՕՊԵԿ-ի երկրներում արևմտյան երկրների վաճառած ապրանքների գները միջին հաշվով 55%-ով բարձր են համադատասխան միջազգային գներից[5]։ Այդ է պատճառը, որ 1975 թ. Իրանի կառավարությունը ընթացիկ հնգամյա պլանի կատարման ժամանակաշրջանում ներմուծման համար նախատեսած գումարները 36 մլդ դոլարից հասցրել է 69 մլդ դոլարի[6]։ Տվյալները ցույց են տալիս, որ ներմուծվող ապրանքների գները նավթարդյունաբերող երկրներում ավելի բարձր են, քան մյուս զարգացող երկրներում։ Դրա պատճառն այն է, որ օգտագործելով մոնոպոլ ներմուծողների իրենց արտոնությունները, միջազգային ընկերություններն ամեն ինչ անում են, որպեսզի վերադարձնեն նավթային գերշահույթների գոնե մի մասը։ Դա առայժմ նրանց հաջողվում է։

ՕՊԵԿ-ի անդամների մեծամասնությունը համոզվելով, որ Արևմուտքի հետ ունեցած միակողմանի արտաքին տնտեսական հարաբերություններն ունեն դդալի բացասական հետևանքներ, ձգտում է զարգացնել համագործակցությունը սոցիալիստական և զարգացող երկրների հետ։ Նման քաղաքականության փոխշահավետությունը ցույց տալու համար չափազանց կարևոր է պարզաբանել ՕՊԵԿ-ի երկրներում կուտակման մակարդակը կամ զարգացող երկրներին օգնելու նրանց հնարավորությունները։ Նավթի գների բարձրացումից հետո նավթարդյունաբերող երկրների մեծ մասում կուտակման նորման կազմեց աղղային եկամտի 30—45%-ը[7]։ Պարսից ծոցի թույլ զարգացած ու սակավաբնակ երկրներում և Լիբիայում այդ տոկոսն ավելի բարձր է։ Մեկ մարդուն ընկնող աղղային եկամտի գումարը Քուվեյթում և Արաբական միացյալ էմիրաթներում համապատասխանաբար կազմում է 11510 և 10480 դոլար, որը բարձր է անգամ այնպիսի զարգացած երկրների ցուցանիշներից, ինչպիսիք

---

[3] „Saudi Arabia. AmEED", Special Report, December, 1976, p. 11.

[4] „Middle East Economic Digest", August, 1974, p. 929.

[5] „Middle East Economic" Survey 21, February, 1975, p. 2.

[6] Նույն տեղում, էջ 1։

[7] В. И. Искодольский, Внутренние источники накопления в развивающихся странах, М., 1976, стр. 11.

են Շվեյցարիան ու Շվեդիան[8]։ Հսկայական են Սաուդյան Արաբիայի ոսկու և վալյուտայի պաշարները։ Այս ցուցանիշով այն կապիտալիստական աշխարհում գրավում է երկրորդ տեղը՝ ԳՖՀ-ից հետո։ Քուվեյթը. Լիբիան, Արաբական միացյալ էմիրաթներն ու Սաուդյան Արաբիան հիմնական կապիտալ արտահանող երկրներն են։ Համեմատաբար զարգացած նավթարդյունաբերող երկրները (Իրան, Վենեսուելա, Ալժիր, Նիգերիա), որոնք նույնպես նավթից խոշոր եկամուտներ են ստանում, անշուշտ, ի վիճակի են իրացնել ստացվող գումարների մեծ մասը։ Դրանցից ոմանք ընդունելով տնտեսական զարգացման արագացած տեմպերով առաջ ընթանալու պլաններ, որոշ շրջանում նույնիսկ ֆինանսական դժվարությունների առաջ կանգնեցին և ստիպված եղան արևմտյան բանկերից վերցնելու խոշոր փոխառություններ[9]։

Նավթի արտահանության աճը զգալիորեն բարելավեց Ինդոնեզիայի ֆինանսական ծանր վիճակը։ Սակայն այդ երկրին անհրաժեշտ հսկայական գումարները և այդ կապակցությամբ թղթադրամների թողարկման աննախընթաց աճն ու ֆինանսների մշտական պակասը հանգեցրին ինֆլյացիայի այնպիսի աճի, որ Ինդոնեզիան ի վիճակի չէ նույնիսկ վճարելու արտաքին պարտքերը, որոնք 1976 թ. հասան 11,4 մլդ դոլարի[10]։

Նավթարդյունաբերող երկրների մեջ կան նաև այնպիսիները (Գաբոն, Էկվադոր), որոնց նավթի արտահանումն այնքան քիչ է, որ վճռական դեր չի կատարում նրանց տնտեսական վիճակը փոխելու գործում։

Անհրաժեշտ է նշել նաև, որ նավթարդյունաբերող երկրների ներքին կյանքին բնորոշ են որոշակի առանձնահատկություններ, որոնք մեծ մասամբ հետևանք են տնտեսական զարգացման կողմնորոշման և պետական քաղաքականության։ Այդ հանգամանքը նկատելի է Մերձավոր Արևելքի մի շարք նավթարդյունաբերող երկրներում սպառողական ապրանքների գների բնագավառում տարվող քաղաքականության մեջ։ Այդ է վկայում ստորև բերվող աղյուսակը։

Սպառողական ապրանքների գների աճը նավթարդյունաբերող մի քանի երկրներում[11], (1970 թ.=100)

Երկրներ	1971	1972	1973	1974	1975	1976
Իրաք	103,6	109,0	114,3	123,8	135,7	148,1
Իրան	104,2	110,9	121,8	138,9	156,9	173,5
Քուվեյթ	—	100,0	108,4	122,7	133,3	137,0
Լիբիա (1969 թ.—109) . . .	97,3	97,2	104,5	112,5	122,9	127,0
Սաուդյան Արաբիա	104,5	109,0	127,0	154,2	207,6	248,7

Ինֆլյացիայի համեմատաբար ցածր տեմպերը Լիբիայում և Իրաքում ցույց են տալիս պետության հնարավորությունները՝ անմիջականորեն կարգավորելու

---

[8] «الأمرام» 3. III. 1977, էջ 5.

[9] „The Banker", vol. 126, № 603, p 481.

[10] «Правда», 9.IX.1976.

[11] „Monthly Bulletin of Statistics", January, 1977; „International Financial Statistics", January, 1977.

ներքին շուկայի գները։ Դրան կարելի է հասնել օրենսդրական ճանապարհով հայրենական արտադրության ապրանքների գները սահմանելու և ներմուծվող ապրանքների գները իջեցնելու համար (եթե դրանք ավելի բարձր են) պետական նպաստ տրամադրելու միջոցով։ Այնուհետև աղյուսակից երևում է, որ գները ամենից քիչ են աճել Քուվեյթում։ Դա բացատրվում է նրանով, որ Քուվեյթում նավթի եկամուտների թռիչքաձև աճին հաջորդեց ֆինանսական կուտակումների օգտագործման ծավալի շարունակվող աճը արտասահմանում, որը հնարավորություն է տալիս կառավարությանը կարգավորել գները։ Քուվեյթում ևս տնտեսական առաջընթացը չնախորդեց սոցիալական և արտադրական ներքին հնարավորությունների ընդարձակմանը։ Բացի վերոհիշյալից, այդ երկրում գների աճը սահմանափակում են նաև ներմուծվող ապրանքների վրա եղած ցածր հարկերը և վարկա-ֆինանսական սիստեմի կազմակերպման գործում ձեռք բերած մեծ փորձը։ Իսկ Իրանում գների աճին նպաստում էին տեղական ձեռնարկատերերի քաղաքականությունը և ներմուծվող ապրանքների ճանապարհին ստեղծված պրոտեկցիոնիստական արգելքները։

Հիշյալ բոլոր երկրներում, ինչպես նշվեց, գները բարձրանում էին ինֆլյացիայի հետևանքով՝ ներմուծվող ապրանքների թանկացման ազդեցության տակ։ Ընդ որում, Սաուդյան Արաբիայում գներն աճում էին հատկապես վտանգավոր ահմպերով։ Դրա պատճառն այն էր, որ այնտեղ գների բարձրացումը կատարվում էր ավելի արագ, քան դրամի քանակի ավելացումը շրջանառության մեջ։

Աղղային համախառն արտադրանքի, թղթադրամի քանակի և սպառողական գների աճի տեմպերը նավթ արտահանող արաբական որոշ երկրներում 1974 թ. (տոկոսներով)[12]

Երկրներ	Աղղային համախառն արտադրանք	Դրամական մասսայի աճ	Սպառողական գներ
Իրաք	340	43	10
Լիբիա	205	47	9
Քուվեյթ	285	13	15
Սաուդյան Արաբիա	370	42	53

Իրաքում, Լիբիայում և Քուվեյթում եկամուտների աճը, ինչպես ասացինք, չհանդեցրեց գների շեշտակի բարձրացման այն պատճառով, որ այդ երկրներում ապրանքների արտադրության ու սպասարկման ոլորտի ընդլայնումը կատարվում է ներմուծվող ապրանքների ծավալի մեծացման և նրանց գների կարգավորման պետական քաղաքականությանը համընթաց, որը և ինչ որ չափով չեզոքացնում է ինֆլյացիայի ազդեցությունը, իսկ Սաուդյան Արաբիայում չկարողացան ինֆլյացիան պահել ցածր մակարդակի վրա, քանի որ ընդունվեցին տնտեսության աճի ոչ իրական տեմպեր։ Այդ երկրի ղեկավարների կարծիքով ոսկու և վալյուտայի կուտակումները կարող էին ստեղծել այնպիսի տնտեսական պոտենցիալ, որը հնարավորություն կտար ուժեղացնելու Սաուդյան Արաբիայի դերը միջազգային ասպարեզում և կամրապնդեր գոյությունն

[12] „Euromoney", March, 1976; „International Financial Statistics", January, 1977.

ունեցող ռեժիմը։ Դրա հետևանքով ընդունվեց մի անիրագործելի հնգամյա պլան 1975 թ. հուլիս—1980 թ. մայիս ժամանակաշրջանի համար, որի կատարումը պահանջում է ծախսել մոտ 498 մլդ սաուդյան ռիալ (144 մլդ դոլար)[13]։ Պլանի հեղինակները կարծում էին, որ հնարավոր կլինի արագ տեմպերով պատրաստել համապատասխան ազգային կադրեր և ներմուծել անհրաժեշտ քանակությամբ բանվորական ուժ, իսկ մյուս կողմից՝ կարճ ժամկետում ստեղծել ժամանակակից ինֆրաստրուկտուրա։ Այս բոլորը պետք է հնարավորություն ընձեռեր հաջողությամբ կենսագործելու վերոհիշյալ կանխատեսումները։ Մեծ հույսեր էին կապվում նաև տեղական բուրժուազիայի հետ, որի համար ստեղծվեցին չափազանց արտոնյալ պայմաններ՝ սաուդյան «հրաշք»-ի կենսագործմանն ակտիվորեն մասնակցելու համար։ Սակայն հենց ինֆրաստրուկտուրայի ցածր զարգացման մակարդակը, բանվորական ուժի պակասը և այն նպատակահարմար տեղաբաշխելու պրոբլեմն այն հիմնական արգելքներն են, որոնք խանգարում են պլանի կատարմանը։ Դրանք խիստ նպաստում են նաև ներքին ինֆլյացիայի աճին, որը պլանի կատարման բոլոր փուլերում, արհեստականորեն մեծացվում է։ Այսպես, օրինակ, պետությունն օտար նավատերերին վճարում է ապրանքների տեղափոխման արժեքի 75—85%-ին հասնող տուգանքներ, որովհետև նավահանգիստները փոքր են, տեխնիկական հնարավորությունները շատ ցածր և այդ պատճառով էլ բազմաթիվ նավեր օրերով պարապուրդ են տալիս։

Ներքին բեռնափոխադրումները կատարվում են մեծ մասամբ փոքրաթիվ, այն էլ վատորակ խճուղիներով։ Մյուս կողմից, ներմուծվող ապրանքների քանակն աճում է, մինչդեռ բեռնատար միջոցները անբավարար են։ Այս ամենը և այլ պատճառներ մեծապես ավելացնում են բեռների տեղափոխման ծախսերը։ Սպեկուլյատիվ գների է հասել բնակարանների վարձը, որովհետև գնալով ավելանում է արտասահմանյան մասնագետների ու բանվորների հոսքը, որոնք արդեն 1975 թ. կազմում էին Սաուդյան Արաբիայի ինքնագործ բնակչության կեսը[14]։ Այդպիսով, տեղացիների եկամուտների աճի, ինչպես նաև օտար մասնագետների ու բանվորների բարձր աշխատավարձի հետևանքով ստեղծվել էր այնպիսի վիճակ, երբ պահանջմունքներն ավելին էին, քան առաջարկը։ Նման դեպքում չեն օգնում նաև փաստորեն անսահմանափակ ֆինանսական միջոցները, որոնք տրամադրվում են ներմուծումն ավելացնելու համար, քանի որ երկրի տնտեսական հետամնացությունը, ավելի ճիշտ նրա տրանսպորտի և առևտրի սահմանափակ հնարավորությունները խանգարում են հավասարակշռելու պահանջմունքներն ու առաջարկը։ Պահանջմունքների անընդհատ աճը բացատրվում է նաև սաուդյան վերնախավի կողմից իրացվող բարիքների ծավալի մշտական ընդլայնումով։ Այս ամենի վրա կարելի է ավելացնել մի բացասական գործոն ևս։ Արտադրության վատ կազմակերպումը, նրա և շինարարության միջև անհրաժեշտ կապերի ու ծառայությունների անբավարար վիճակը, նախագծող և այլ կազմակերպությունների չհամաձայնեցված գործունեությունը, բանվորական ուժի, շինանյութի և տեխնիկայի ապահովման դժվարությունները հաճախ պատճառ են դառնում շինարարությունների ժամկետների երկարաձգման և թանկացման։ Հարկ է նշել նաև, որ մաս-

---

[13] „The Petroleum Economist", July. 1975, p. 224.

[14] «Азия и Африка сегодня», 1977, № 3, стр. 50.

նավթ սեկտորը համարյա չի մասնակցում երկրի ինդուստրացման գործին, մինչդեռ նախատեսվում էր, որ նա կտա ազգային արտադրանքի մեծ մասը, իսկ պետական ձեռնարկությունները 1979—1980 թթ. պետք է տան ազգային համախառն արտադրանքի (բացի նավթից) 3%-ը միայն։ Պետական սեկտորի արտադրանքը ներկայումս բարձրացել է 5,6-ից 9%-ի[15], իսկ մասնավորները չեն ապահովում սպասելիքների գոնե փոքր մասը։

Տեղական առևտրավաճառական կապիտալը, ընդհակառակն, ձգտում է ավելի ևս ներթափանցել առևտրի, հողամասերի սպեկուլյատիվ վաճառքի, տների և հյուրանոցների շինարարության, տրանսպորտային զանազան գործառնությունների շահավետ ոլորտը։ Արդյունաբերության մեջ դրվող երկարատև վարկերի ապադա, թեկուզ և բարձր շահույթները առայժմ նրան չեն հրապուրում։

Տնտեսական աճի պայմաններում պետական կարգավորման թուլության և ինֆլյացիայի աղբյուրներից մեկը երկրում դրամաշրջանառության չզարգացած վիճակն է։ ԱՄՆ-ում, օրինակ, հաշվարկվում է շրջանառության մեջ եղած ամբողջ դրամը, ԴՖՀ-ում՝ համարյա ամբողջը, իսկ Սաուդյան Արաբիայի բանկերը կարողանում են հաշվարկել միայն 20%-ը[16]։ Մնացած 80%-ն իրենց ձեռքերում են կենտրոնացնում առևտրականները, վաճառուները, դրամափոխները, ինչպես նաև տեղական ազգաբնակչության մի մասը, որը չգիտի բանկերի գոյության մասին, կամ չի հավատում դրանց։ Բանկերում պահվող ավանդներն էլ, որպես կանոն, կարճաժամկետ են, որը հնարավորություն չի տալիս դրանք օգտագործելու տնտեսության հիմնական ճյուղերում, որոնք պահանջում են երկարաժամկետ ներդրումներ։ Դրամական կուտակումների նման ձևերը հետևանք են պետական էմիսիայի, որի անհրաժեշտությունը սերտորեն կապված է ներմուծման աննախընթաց ընդլայնման հետ և որը արտահայտում է աղդարնակչության եկամուտների դդալի աճը։ Բացի այդ, թղթադրամի քանակը շրջանառության մեջ ավելանում է ազգաբնակչության մոտ կուտակված դրամի և վաճառական կապիտալի գործողությունների ծավալման հետևանքով։

Սաուդյան Արաբիայում գների ինֆլյացիոն թռիչքը, անշուշտ, յուրահատուկ չէ միայն այս երկրին։ Ինչ-որ չափով այն ընդհանուր երևույթ է նաև ՕՊԵԿ-ի մյուս անդամների համար։ Սակայն այդ երևույթի արտահայտման ձևերը տարբեր են և կախված են տվյալ երկրի տնտեսական զարգացման աստիճանից, նավթից ստացվող եկամուտի չափերից և կառավարությունների տնտեսական քաղաքականությունից։ Բացի այդ, սոցիալ-տնտեսական զարգացման արագացման հետ կապված ստրուկտուրային անհամաչափությունները (մեկ կամ մյուս բնագավառի զարգացման թափը, մյուսների հետամնացությունը և այլն), որպես կանոն, ուժեղացնում են ինֆլյացիան այդ երկրներում։

Այսպիսով,, նավթադոլարների արժեզրկումը զարգացած կապիտալիստական երկրներում և ներմուծվող ինֆլյացիան, ինչպես նաև ներքին ինֆլյացիոն պրոցեսները բացասաբար են անդրադառնում ՕՊԵԿ-ի անդամների սոցիալ-տնտեսական զարգացման վրա։ Այդ երկրների նման վիճակն ամենից ավելի

---

[15] „Saudi Arabia. AMEED", Special Report. December, 1976, p. 2.

[16] Նույն տեղում, էջ 25։

ազդում է ժողովրդական զանգվածների կենսամակարդակի վրա, խիստ վատթարացնելով այն։ ՕՊԵԿ-ի՝ զարգացման կապիտալիստական ուղին ընտրած երկրներում հատկապես ուժեղանում է սոցիալական շերտավորումը, սրվում են դասակարգային հակասությունները։ Միաժամանակ այդ երկրների ստացած գերշահույթից որոշ մաս հատկացվում է ազգաբնակչության ցածր խավերի առանձին խմբերի կաշառելու և բանվորական արիստոկրատիա ստեղծելու նպատակով։ Դա զգալիորեն խանգարում է աշխատավորությանը՝ համախմբելու իր ուժերը հանուն ընդհանուր դասակարգային շահերի։

Այդպիսով, նավթարդյունաբերող երկրների ղեկավար շրջաններն աշխատում են գների բարձրացման և այլ երևույթների հետևանքով ունեցած կորուստները վերականգնել եկամուտների աճի միջոցով, միաժամանակ փորձելով սահմանափակել ինֆլյացիայի տեմպերը։ Սակայն մասնավոր նախաձեռնությունը, օգտվելով ստեղծված իրավիճակից, շարունակ բարձրացնում է սպառողական առարկաների և սպասարկման ծառայությունների արժեքը, ծավալում սպեկուլյատիվ գործողություններ, արգելակելով պետության առանց այն էլ թույլ և ոչ հետևողական միջոցառումները։ Պետության փորձերը՝ օրենքի ուժով ազդել այդ պրոցեսների վրա և կարգավորել երկրի ներքին կյանքը, առանձին դրական արդյունքներ չեն տալիս։

Էներգետիկ և հումքային ճգնաժամերի սրումը, նավթի և այլ ապրանքների միջազգային գների խիստ բարձրացումը զգալիորեն վատթարացրին նավթամթերքներ ներմուծող զարգացող երկրների առանց այն էլ ծանր տնտեսական դրությունը։ Չկարողանալով դուրս գալ ծանր տնտեսական վիճակից, նույնիսկ ավելացնելով արտահանման ծավալը կամ ուժեղացնելով ներքին կուտակման աղբյուրների դերը, այդ երկրները ստիպված են կրճատել նարմուծումը և հետաձգել զարգացման բազմաթիվ նախագծերի կենսագործումը։ Այդ երկրների ճնշող մեծամասնության պարտքերը վճարելու անկարողությունը նրանց զրկում է արագացնելու երկրի զարգացման պրոցեսը՝ օտարերկրյա փոխառությունների ծավալն ընդարձակելու միջոցով։ ՕՊԵԿ-ի անդամ երկրների, միջազգային ֆինանսական կազմակերպությունների և արևմտյան երկրների ներդրումները անբավարար են այդ խնդիրը իրագործելու կամ ներքին դժվարությունները հաղթահարելու համար։ Առանձնապես ծանր է թույլ զարգացած մոտ 45 երկրների և զարգացող այն երկրների վիճակը, որոնց ներմուծման բնագավառում մեծ է նավթի տեսակարար կշիռը։ Նավթի ներմուծման չափանիշը Հնդկաստանի առևտրի դեֆիցիտում 1975 թ. հասավ 76, Քենիայինը՝ 65, Զաիրինը՝ 48, Ֆիլիպիններինը՝ 48%-ի և այլն[17]։ Հիշյալ երկրներում ինֆլյացիայի ուժեղացումը տեղի է ունենում տնտեսական դժվարությունների պայմաններում, հիմնականում ներմուծվող նավթի, նավթամթերքների և սպառողական ապրանքների թանկացման հետևանքով։ Բացի այդ, արևմտյան մոնոպոլիաները մշտապես ձգտում են ՕՊԵԿ-ի անդամներին վաճառվող ապրանքների բարձր գները տարածել նաև դրանց մյուս ներմուծողների, այդ թվում նաև ամենահետամնաց երկրների վրա։

Զարգացող երկրների վրա ինֆլյացիայի ազդեցության վերլուծությունը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ էներգետիկ ու հումքային ճգնաժամը և համաշխարհային կապիտալիստական սիստեմը խիստ բացասական աղդ-

[17] „The Economist", December 18, 1976, p. 216.

ցություն ունեն այդ երկրների գոյավիճակի վրա։ Բանն այն է, որ չնայած տնտեսական անկախության հասնելու ասպարեզում ձեռք բերած նվաճումներին, այդ երկրները շարունակում են մնալ զարգացած կապիտալիստական պետությունների շահագործման օբյեկտը։ Այդ շահագործումը, անշուշտ, տեղի է ունենում ավելի կատարելագործված ու նուրբ միջոցներով, հաճախ մեծ մասամբ շրջանառության ոլորտում, բայց շարունակում է անուղղելի վնաս հասցրնել «երրորդ աշխարհ»-ի երկրների տնտեսությանը։ Արևմուտքի հսկայական անտեսական պոտենցիալն իմպերիալիստական պետություններին օգնում է թուլացնելու ճգնաժամերի և ինֆլյացիայի ազդեցությունը իրենց երկրներում նաև դարդացող երկրների հաշվին։ Իսկ վերջիններիս թույլ զարգացած տնտեսությունը, որը զդալիորեն կախված է միջազգային շուկայից, ընդհակառակն, հաճախ ենթարկվում է ճգնաժամի ու ինֆլյացիայի հարվածներին։ Դրանից զերծ չեն նույնիսկ ՕՊԵԿ-ի ֆինանսապես ավելի ուժեղ երկրները։ Հետևաբար, ինֆլյացիայի բարձր մակարդակը զարգացող, մասնավորապես նավթարդյունարևրող երկրներում հետևանք է ոչ միայն կապիտալիզմի տարերային օրենքների, այլև սկզբական-մոնոպոլիստական կապիտալիզմի նպատակամղված գործունեության, որն օգտագործում է այդ օրենքները՝ զարգացող երկրները նեոդազութատիրական ձևերով շահագործելու համար։

Այսպիսով, ՕՊԵԿ-ը, որպես զարգացող երկրների անկախ և ինքնուրույն գործունեության և դրանց ազատության պայմաններում ստեղծված կազմակերպություններից մեկը, զեռևս ենթակա է ժամանակակից կապիտալիզմի բազաբական և տնտեսական ազդեցությանը։ Այդ են հաստատում 1977 թ. դեկտեմբերին ՕՊԵԿ-ի՝ Կարակասում գումարված 50-րդ կոնֆերանսի արդյունքները։ Կոնֆերանսի հիմնական խնդիրը նավթի պաշարների խելացի օգտագործման և հում նավթի միջազգային գներ հաստատելու հարցերն էին։ Բանն այն է, որ նավթի և արդյունաբերական ապրանքների միջազգային գների միջև եղած ճեղքվածքը, 1976 թ. վերջին կայացած կոնֆերանսից հետո, այսինքն մեկ տարում, մեծացել էր ավելի քան 23%-ով, իսկ նավթինը՝ միայն 10%-ով[18]։ Սակայն ՕՊԵԿ-ի անդամները չկարողացան մշակել ընդհանուր կարծիք՝ հում նավթի բազային գինը բարձրացնելու հարցում։ Կոնֆերանսի մասնակիցներից երեքը՝ Սաուդյան Արարիան, Արաբական միացյալ էմիրաթները և Իրանը, ձախողեցին քննարկվող հարցի լուծումը։ Ի վերջո որոշվեց հում նավթի գինը «սառեցնել» և այդ հարցին վերադառնալ 1978 թ. ամռանը տեղի ունենալիք հերթական կոնֆերանսում։

Չնայած այս ամենին, նավթադոլարների գոյության և կապիտալիստական աշխարհում նոր ֆինանսական կենտրոնի ձևավորման փաստն ինքնին մի մարտահրավեր է Արևմուտքին։ Նրա ծնունդը խորհրդանշում է բազմաթիվ և բազմադան տնտեսական, կուլտուրական, քաղաքական միջազգային կազմակերպությունների գործունեության ծավալման փաստը Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի զարգացող երկրներում։

Նշված երկրներում երկրորդ կարևոր երևույթն այն է, որ նավթային հարստությունների աղջայնացումը և իմպերիալիստական մոնոպոլիաների գործունեության սահմանափակումը դարձան տնտեսության այլ բնագավառներում տիրապետող օտար կապիտալի ազդայնացման նախաբանը։ Զարգացող երկրը-

---

[18] «Известия», 22.XII.1977.

ները հետզհետե դառնում են իրենց բնական հարստությունների տերը, որի հետևանքով սկսվել է գաղութային-մոնոպոլիստական շահագործման սիստեմի, կոնցեսիոն և իմպերիալիստական երկրներից ուղղակի կախման այլ ձևերի քայքայման պրոցեսը։ «Այժմ արդեն պարզ է,— ընդգծել է Լ. Ի. Բրեժնևը,— որ համաշխարհային գաղութային ուժերի ներկա հարաբերակցության պայմաններում ազատագրված երկրները լիովին կարող են հակադրվել իմպերիալիստական թելադրանքին, հասնել արդարացի, այսինքն՝ իրավահավասար տնտեսական հարաբերությունների»[19]։

НЕФТЕДОЛЛАРЫ И ИХ ВЛИЯНИЕ НА ЭКОНОМИКУ РАЗВИВАЮЩИХСЯ СТРАН

РУБЕН ИНДЖИКЯН

Резюме

1960-ые гг. явились новым этапом на пути развертывания национально-освободительного движения народов «третьего мира».

В большинстве освобожденных стран продолжается упорная борьба за обеспечение своей экономической независимости. Выражением этого явилась, в частности, организация ОПЕК, которая развернула активную деятельность и стала определять мировые цены на нефть. Во многих странах это было началом национализации иностранных предприятий и капитала. Однако, используя большой опыт н опираясь на государственную власть, империалистические монополии продолжают эксплуатировать развивающиеся страны. Накопления нефтедобывающих стран они умело направляют в кредитно-банковскую систему Запада. Тем не менее нефтедоллары оказывают определенное положительное влияние на эти страны. Наряду со странами социалистического лагеря некоторые нефтедобывающие страны с прогрессивными режимами субсидируют социально-политические и экономические мероприятия освобожденных стран.

---

19 «ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», Երևան, 1976, էջ 18։